Ամեն կարգի քաղաքացիները, որոնք պարապում են առուտուրով, արհեստներով, տէրութեան ծառայութիւնով, իւրեանց պարապմունքների արտադրած ուղղակի շահերով չբաւականանալով, ցանկանում են և կողմնակի շահեր ունենալ։ Այդ ամենքը իւրեանց ուժի և կարողութեան չափ, իւրեանց պատրաստ ծառայութիւնը յայտնում են գիւղացուն, հոգալով նորա զգեստեղէնների պիտոյքը և փոխառական դրամ։ Այդ օպերացիայի մի տեսակը անուանվում է «սալաֆ»։

Քաղաքացին գիւղացուն տալիս է դիցուք մի օսմանեան ոսկի, կամ նորա արժողութեամբ ապրանք, որը պարտական է մերձակայ հունձին մի ոսկու փոխառութեանը, երկու չափ ցորեան տոկոս վճարել, (ամեն մի չափը հաւասար է այստեղի չորս փութին) այժմեան գնով եթէ հաշուենք մի չափը արժէ մի մէջիդեայ, մի օսմանեան ոսկին կազմուած է հինգ մէջիտից, ուրեմն քաղաքացին գիւղացուց վեց ամսուայ ընթացքում մի օսմանեան ոսկուն $^2/_5$ կամ 5 մէջիտիից երկուսը տոկոս է ստանում։ Եթէ վեց ամսեայ ժամանակ 10 մէջիդեան բերում է չորս տոկոս, նշանակում է, որ տարին տասին ութ տոկոս է ընկնում, կամ հարիւրին ութսուն։

Այս ձևը աստիճանարար սնանկանալու ձևն է,